Ձեր՝ 13.09.2013թ. թիվ 2621/1370 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ
Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան,

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության Աշտարակի բաժնի ձերբակալվածներին պահելու վայրեր կատարած այցի ընթացքում արձանագրված խախտումները քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում և Արագածոտնի մարզային վարչությունում:

Քննարկման արդյունքներով Արագածոտնի մարզային վարչությունում անցկացվել է ծառայողական քննություն, որի ընթացքում հիմնավորվել է Աշտարակի բաժնի հերթապահ մասի մի խումբ ծառայողների կողմից թույլ տրված բացթողումների և խախտումների հանգամանքները, որի կապակցությամբ ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետի հրամանով Աշտարակի բաժնի հերթապահ մասի պետը ենթարկվել է կարգապահական տույժի, իսկ մի խումբ ծառայողներ խիստ նախազգուշացվել են:

ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետին հանձնարարվել է ծառայողական քննության եզրակացությունը քննարկել մարզային վարչության օպերատիվ խորհրդակցությունում և մարզային վարչության շտաբի կողմից մշտական հսկողություն սահմանել ենթակա բաժինների ՁՊՎ-ների գործունեության նկատմամբ, ինչպես նաև ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ հայտնաբերված թերությունները վերացնելու և հետագայում նմանատիպ խախտումները բացառելու համար: Հանձնարարվել է նաև, ծառայողական պարապմունքների մասնագիտական թեմաները պլանավորելիս դասաժամեր հատկացնել ձերբակալվածներին պահելու վայրերի գործունեությունը կարգավորող նորմատիվ ակտերի ուսումնասիրմանը:

ՀՀ ոստիկանության շտաբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1370 13.09.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի սեպտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արագածոտնի ՄՎ Աշտարակի ՁՊՎ արձանագրել է մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ.

1. ՁՊՎ-ի խցերը ընդհանուր գտնվում էին փոշոտ, կեղտոտ վիճակում:
2. 4-րդ խցի սպիտակեղենը գտնվում էր կեղտոտ վիճակում:
3. Տեսակցության, քննչական սենյակները և բուժսենյակը գտնվում էին կեղտոտ, փոշոտ վիճակում:
4. Սանհանգույցը գտնվում էր հակահիգիենիկ վիճակում, ջրատաքացուցիչը չէր գործում, իսկ ջրի ծորակից անընդհատ ջուր էր հոսում, փականի անսարքության պատճառով:

Խախտումներ.

1. ՁՊՎ-ի գրանցամատյանները լրացվում են խախտումներով և ջնջումներով: Օրինակ՝ ըստ «Ձերբակալված անձանց բուժօգնության և բուժզննության» գրանցամատյանի՝ բուժօգնություն է ցուցաբերվել 6 անգամ, բայց «Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» գրանցամատյանում բուժսենյակ տեղափոխելու վերաբերյալ գրառումները 3-ն են:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ... 3935 17 09 13
ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՏԻՑ ԹԻՎ 6190 17 09 2013

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

2. Չի պահպանվում ՀՀ ոստիկանության կողմից Դիտորդական խմբին ուղղված 26.04.2013թ-ի թիվ 2/2-1-1237 գրության պահանջները: Այն է՝ «անձին ՁՊՎ ընդունելիս, կամ այլ հիմնարկ տեղափոխելիս անհապաղ կապի հնարավոր միջոցով տեղյակ պահել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած անձին»:

   Հիմք՝ համապատասխան ձերբակալվածի ընտրած անձին հեռախոսազանգի միջոցով իրազեկելու վերաբերյալ ոչ մի տեղեկանք առկա չէր ՁՊՎ-ում և ավելին՝ այցելության պահին ՁՊՎ-ում պահվող 2 կալանավորված անձանց հարազատներին չէին իրազեկել:

3. Բաբկեն Գևորգի Գալստյանը ոստիկանության Աշտարակի բաժին բերման է ենթարկվել 02.06.2013թ-ին ժամը 17^{30}-ին: Հաջորդաբար ներկայացվել է քննիչին և 03.06.2013թ-ին ժամը 01^{00} / որը ջնջումով էր գրված/ ընդունվել է ՁՊՎ: Բաբկեն Գևորգի Գալստյանը խցից դուրս է բերվել և տեղափոխվել է ընդհանուր իրավասության դատարան խափանման միջոց կիրառելու նպատակով արդեն իսկ ձերբակալման առավելագույն 72 ժամը լրացած՝ 05.06.2013թ-ին ժամը 17^{50}-ին: */ փաստը հաստատող լուսանկարներ -1,2,3/*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություններ թերությունների և խախտումների վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org